ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱԿԱԳՆԵՐԸ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրության օբյեկտ

- Պատկանում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց,
- Մինչև 20 տարվա արտադրության են,
- Չունեն էական վնասվածքներ, կորոզիայի ենթարկված մասեր:

Ենթակա չեն ապահովագրության

- Mercedes G-class,
- VAZ 2121 (Նիվա),
- Սպորտային կատեգորիայի տակ ընկնող մակնիշները, այդ թվում՝ Ford Mustang, Chevrolet Camaro, Dodge, Ferrari, Maserati, Porsche Cayman, Carrera, և այլն,
- Որպես տաքսի, հանրային տրանսպորտ կամ ավտովարձույթում օգտագործվող ցանկացած ավտոմեքենա:

Ուշադրություն – Ծանրաքարշ բեռնատարները (ֆուռեր) ենթակա են ապահովագրության՝ միայն Ապահովագրողի հատուկ հաստատման դեպքում: Սույն դրույթը չի վերաբերվում թեթև կատեգորիայի բեռնատարներին, օրինակ՝ Mercedes Sprinter, Ford Transit, և այլն:

Լիազորված վարորդներ

- Պայմանագիրը կնքվում է միայն ֆիքսված վարորդներով (անսահմանափակ թվով վարորդներ հնարավոր չէ նշել),
- Լիազորված վարորդ կարող են հանդիսանալ՝ Ապահովադիրը, Ապահովադրի ընտանիքի անդամները, Ապահովադրի հետ համատեղ բնակվող անձինք, Ապահովադրի վարորդը: Այլ անձինք, օրինակ՝ Ապահովադրի ընկերը, գործընկերը, և այլն, կարող են նշվել որպես լիազորված վարորդ միայն Անդերրայթինգի կողմից հատուկ հաստատման դեպքում (Վաճառողի կողմից ներկայացվող համապատասխան հիմնավորման հիման վրա):
- Պայմանագրում կարող է ընգրկվել առավելագույնը 4 վարորդ (սեփականատերը/Ապահովադիրը ներառյալ):
- Լիազորված վարորդի տարիքը չպետք է պակաս լինի 23-ից, իսկ վարորդական փորձը՝ 3 տարուց,
- Լիազորված վարորդ չեն կարող հանդիսանալ ԲՄ 15 և ավել դաս ունեցող վարորդները:

Անսահմանափակ թվով վարորդներով տարբերակի դեպքում անհրաժեշտ է ստանալ Ապահովագրողի հատուկ հաստատումը:

Ապահովագրական ռիսկեր

- Ֆիզիկական վնաս.
    - ճանապարհատրանսպորտային պատահար (շրջում, բախում և այլն),
    - հրդեհ, պայթյուն,
    - վայր ընկնող ծառերից, սյուներից և այլ առարկաներից (նաև անիվների տակից թռնող քարերից),
    - կարկուտ, երկրաշարժ, ջրհեղեղ և այլ տարերային աղետներ
    - երրորդ անձանց հակաօրինական գործողություններ, ներառյալ ՏՄ որոշ ագրեգատների գողություն,

- կենդանիների գործողություններ,
- Առևանգում.
  - ՏՄ կորուստ գողության, կողոպուտի, ավազակության հետևանքով:

Ապահովագրության տարածք

- Ապահովագրությունը պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում գործում է ՀՀ, ԼՂՀ տարածքը, ինչպես նաև տարվա ընթացքում 30 օր Վրաստան, Իրան և ԱՊՀ տարածքը:
- Վրաստան, Իրան և ԱՊՀ տարածքում ապահովագրությունը գործում է տարեկան համախառն 30 օր: Առանձին որևէ տարածաշրջանի ընդլայնում չի իրականացվում:
- ՀՀ և ԼՂՀ տարածքից դուրս տեղի ունեցած ՃՏՊ դեպքում Ապահովադիրը/Շահառուն պարտավոր է տրամադրել ՃՏՊ տեսանկարահանումը՝ արձանագրված կամ ՏՄ մեջ տեղադրված, կամ արտաքին տեսանկարահանող սարքի միջոցով: Պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը:

Բացառությունները և այլ պայմանները

Ապահովագրական ծածկույթից բացառությունները, չհատուցվող դեպքերը կարգավորվում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված և այդ պահին գործող Տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության կանոններով, որը հասանելի է ընկերության պաշտոնական կայքէջում:

Չհատուցվող գումար

Ոչ պայմանական չհատուցվող գումար	
Վնաս	1% ապահովագրական գումարից, նվազագույնը՝ 40’000 ՀՀ դրամ
Առևանգում	10% ապահովագրական գումարից, կամ 5%, եթե տրանսպորտային միջոցը համալրված է հակաառևանգման համակարգով

Գործող ապահովագրական գումարի սահմանափակումներ, սակագներ

Ապահովագրական գումար	Տարեկան սակագին
Առավելագույն սահմանաչափ կիրառելի չէ: Ցանկացած ապահովագրական գումարի դեպքում անհրաժեշտ է դիմել Ապահովագրողի հաստատման համար	2.5%

Ապահովագրողի հաստատումը ստանալու համար անհրաժեշտ է վերջինիս հետ համաձայնեցրած էլեկտրոնային հասցեին ուղարկել հարցում՝ լրացնելով ստորև աղյուսակը և կցելով.

1. Ապահովագրվող ՏՄ տեխնիկական անձնագիրը,
2. Լիազորված վարորդների անձնագրերը և վարորդական իրավունքները,
3. Լիազորված վարորդների Բոնուս-Մալուս դասերի հաշվետվությունները:

Ապահովագրողը պարտավոր է 5 աշխատանքային ժամի ընթացքում պատասխանել հարցմանը՝ հետևյալ 3 տարբերակներից մեկով.

1. Հաստատել գործարքը,
2. Մերժել գործարքը՝ ներկայացնելով մերժման հիմնավորում,
3. Առաջարկել այլ պայմաններ՝ ներկայացնելով հիմնավորում:

70,000,000 ՀՀ դրամը գերազանցող ապահովագրական գումարի դեպքում Ապահովագրողի պատասխանի ժամկետը սահմանվում է մինչև 3 աշխատանքային օր:

Գույքի ապահովագրություն

Ապահովագրության օբյեկտ

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է այն գույքի համար, որը ձեռք է բերվում վարկով, և բանկը կամ վարկային կազմակերպությունը պահանջ է ներկայացրել հաճախորդին ապահովագրելու այն: Սույն կետին չի վերաբերվում բանկերի հետ համագործակցության պայմանագրերի ներքո Բորդերոներով կնքվող պայմանագրերին: Վերջիններիս գնանշման, կնքման և վերակնքման պայմանները կարգավորվում են վերոնշյալ համագործակցության պայմանագրերով:

Ապահովագրվում են.

- **Հարդարում և ճարտարագիտական սարքավորումներ** - Ներքին հարդարում՝ ներառյալ տարբեր տեսակի հատակային, որմնային, առաստաղային ծածկույթները, ներկառուցված պահարանները, խոհանոցը՝ ներկառուցված տեխնիկայով, ներկառուցված պահարանները, պահարանային սարքավորումներ, բուխարիները, վառարանները, դռները և պատուհանները, էլեկտրամատակարարման ներքին և արտաքին համակարգերով ճարտարագիտական սարքավորումները (ներառյալ տարբեր տեսակի լուսավորող գործիքները, էլեկտրահաստատման նյութերը և սարքավորումները, էլեկտրակառույցները), ջրմուղին և կոյուղին (ներառյալ սանիտարատեխնիկական գործիքները), ջերմա և գազամատակարարումը (ներառյալ ագրեգատները և գործիքները), օդափոխումը և օդորակումը, աղբատարները, անվտանգության ապահովման առարկաները (չհրկիզվող պահարաններ, փականները և այլն) և այլն,
- **Կրող կառույցներ** - բնակարաններում՝ պատերը, կրող միջնապատերը և առաստաղը, կառույցներում՝ պատվանդանով հիմքերը, արտաքին և ներքին պատերը և կրող միջնապատերը, առաստաղը (նկուղային, միջհարկային և ձեղնահարկային), ծածկը՝ ներառյալ տանիքը, արտաքին հարդարումը, բալկոնը (ներառյալ բալկոնի ծածկը):

Ենթակա չեն ապահովագրության

- Փայտից տները և շինություններ, ինչպես նաև դրանցում գտնվող գույքը,
- Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնք ներառված են տարաբնակեցման պլաններում,
- Խարխուլ շինությունները, որոնց ֆիզիկական մաշվածությունը կազմում է 75 և ավելի տոկոս,
- Վթարային վիճակում գտնվող կամ քանդման ենթակա շենքերում գտնվող բնակարանները,
- Սողանքային գոտիներում գտնվող բազմաբնակարանային տները կամ առանձնատները:

Ապահովագրական ռիսկեր

- «**Հրդեհ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) կրակի ծագման արդյունքում, այդ թվում հարևան տարածքներում և Ապահովադրին (Շահառուին) չպատկանող տարածքներում առաջացած, որը կարող է ինքնուրույնաբար տարածվել դրա ծագման և տարածման համար հատուկ չնախատեսված վայրերում, ինչպես նաև կարող է ունենալ գույքի վրա ազդեցություն այդ կրակի, վառվող սուբստանցիաների (ծխի և այլն), բարձր ջերմաստիճանի հետևանքով կամ

հրդեհը հանգցնելուն ուղղված օրինական գործողությունների, այդ թվում՝ հրդեհամարման ավտոմատ համակարգերի օգտագործման արդյունքում:

- «**Պայթյուն**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է կենցաղային նպատակներով օգտագործվող գազի կամ պայթուցիկ նյութերի պահպանման, տեղափոխման կամ վերամշակման (օգտագործման) համար օգտագործվող գազատարների, կաթսաների և այլ տարողությունների կամ մեխանիզմների պայթյունի:
- «**Վնասվածք ջրից**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է դրա վրա ջրի կամ ապահովագրության տարածքում գտնվող ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, սառեցնող կամ օդափոխող համակարգերից այլ հեղուկների ներգործության (ներառյալ այդ համակարգելի վերանորոգման ժամանակ պատճառված վնասները), կամ Ապահովադրին (Շահառուին) չպատկանող հարևան շինություններից (ներառյալ չբնակեցված տարածքներ) ջրի կամ այլ հեղուկների ներգործության արդյունքում, ինչպես նաև հրդեհաշիջման համար նախատեսված հեղուկների (ներառյալ հակահրդեհային համակարգի) հետևանքով գույքին հասցված վնասը:
- «**Մեխանիկական վնասներ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է ցամաքային կամ ջրային տրանսպորտային միջոցների վրաերթի, թռչող օբյեկտների կամ դրանց մասերի, բեռների կամ այլ առարկաների թռչող օբյեկտից անկման հետևանքով, ինչպես նաև այդ առարկաների անկման ժամանակ առաջացած օդային հարվածող ալիքների, հարևան շինությունների կապիտալ վերանորոգման կամ վերակառուցման (վերապլանավորումներ, վերասարքավորումներ) անցկացման, բազմաբնակարան տների կամ կառույցների վրա, որտեղ գտնվում է ապահովագրության օբյեկտը, երրորդ անձանց կողմից շինարարական աշխատանքների կատարման, սյուների (այդ թվում՝ լուսավորող հենքեր և այլն), ծառերի, շինարարական ամբարձիչների և այլ շինարարական մեխանիզմների անկման հետևանքով ապահովագրված գույքի վրա:
- «**Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է հափշտակման (գողություն, կողոպուտ, ավազակություն), վանդալիզմի, կամ էլ գույքի դիտավորյալ ոչնչացման կամ վնասման, այդ թվում՝ այրելու, պայթեցնելու կամ այլ համայնավտանգ ճանապարհներով, կամ էլ նշվածների իրագործման փորձերի:
- «**Տարերային աղետներ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է երկրաշարժի, հողմի, փոթորիկի, մրրիկի, կայծակի հարվածի, ջրհեղեղի, հողմապտույտի, հրաբխի ժայթքման կամ ստորգետնյա բնական կրակի ներգործության, սողանքի, հեղեղի կամ լեռնային փլուզման, ինչպես նաև այլ վտանգավոր բնական երևույթների, այդ թվում՝ մթնոլորտային տեղումների (կարկուտ, տեղատարափ անձրև, ձյուն), եթե դրանք Ազգային օդերևութաբանական ծառայության մարմնի կամ ԱԻՆ կողմից ճանաչվել են որպես վտանգավոր բնական երևույթներ:

Չհատուցվող գումար

Ոչ պայմանական չհատուցվող գումար	
Երկրաշարժ	2% (նվազագույնը 200,000 ՀՀ դրամ)՝ ամեն և յուրաքանչյուր վնասի կամ դեպքի համար
Մնացած պատահարների դեպքում	1% (նվազագույնը 90,000 ՀՀ դրամ) ամեն և յուրաքանչյուր վնասի կամ դեպքի համար

Ապահովագրության տարածք

Ապահովագրված գույքը պետք է գտնվի ՀՀ և ԼՂՀ տարածքում:

Բացառությունները և այլ պայմանները

Ապահովագրական ծածկույթից բացառությունները, չհատուցվող դեպքերը կարգավորվում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված և այդ պահին գործող Հրդեհից և այլ վտանգներից գույքի և քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության համապարփակ կանոններով, որը հասանելի է ընկերության պաշտոնական կայքէջում:

Ապահովագրական արժեք/սահմանաչափ

Ապահովագրված օբյեկտի շուկայական արժեքը/ապահովագրական արժեքը սահմանվում է Բանկի պահանջով կամ Բանկի պատվերով իրականացրած շուկայական արժեքի գնահատման հաշվետվության հիման վրա, իսկ ապահովագրական գումարը՝ կամ բանկի կողմից հայտարարագրված/ուղեգրված վարկի մնացորդի չափով, կամ շուկայական արժեքի չափով: Ապահովագրական գումարի չափը սահմանելիս հիմք է ընդունվում կամ Բանկի կողմից դուրս գրված ուղեգիրը, կամ էլեկտրոնային նամակով Բանկի կողմից ուղարկված տեղեկատվությունը:

Գործող ապահովագրական գումարի սահմանափակումներ, սակագներ և միջնորդավճարներ

Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում «Աղյուսակ 1 - Ապահովագրության օբյեկտ/ապահովագրական գումար/սահմանաչափ»-ում նշված օբյեկտները իրենց համապատասխան սահմանաչափով, որոնք հանդիսանում են վարկային հարաբերությունների օբյեկտ

Աղյուսակ 1

ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ (ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ)
I. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ	
Անհատական բնակելի տները (սեփական տուն)	100,000,000 ՀՀ դրամ
Բնակարան (բազմաբնակարան բնակելի շենքում գտնվող առանձին տարածք՝ օժտված կոմունալ հարմարություններով)	100,000,000 ՀՀ դրամ
Հասարակական նշանակության շենք, շինություն, տարածքներ (առևտրի կենտրոններ, խանութներ, գրասենյակային տարածքներ, բնակչության սոցիալական, մշակույթային, կրթական սպասարկման, վարչական կամ հասարակական գործառույթների իրականացման համար նախատեսված)	100,000,000 ՀՀ դրամ
Արտադրական նշանակության շենք, շինություն, գործարաններ (արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ արտադրությունների կազմակերպման համար նախատեսված)	100,000,000 ՀՀ դրամ
II. ՊԱՀԵՍՏ	
<u>Այն դեպքում, երբ ապահովագրության ենթակա օբյեկտը պահեստ է, շրջանառու միջոցներ, ապրանքային պաշարներ, ապահովագրության պայմաններ ստանալու համար անհրաժեշտ է դիմել Ապահովագրողին:</u>	

Ապահովագրության ենթակա չեն, կամ ենթակա են միայն Ապահովագրողի հատուկ հաստատմամբ, հետևյալ օբյեկտները ցանկացած պարագայում՝ անկախ հաճախորդի տեսակից:

// Շինարարության կամ հիմնանորոգման ընթացքում գտնվող գույքը

//	Գազալցակայաններ, բենզալցակայաններ, Հիդրոէլեկտրակայաններ, Ջերմաէլեկտրակայաններ
//	0-5 կարգի բոլոր վթարային շենքերը 0 կամ I կարգ - արտաքին հնամաշ տեսքով շենքեր, II կարգ - շենքերում առկա են ճաքեր, սակայն դրանք շենքի կոնստրուկցիային կամ ամրությանը վտանգ չեն ներկայացնում, III կարգ - շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար և պակասում է 40% ուժը համարող շինությունները: Այս կարգից սկսած միջամտում է ՀՀ կառավարությունը, IV կարգ - այն շենքերը, որոնց մի մասը փլուզված է, մյուս մասն էլ ենթակա չէ շահագործման, V կարգ - երբ շենքը կիսավեր է:
//	Վթարային թաղամասում գտնվող շենքերը, շինությունները
//	Ցանկացած գույք, որի ֆիզիկական մաշվածությունը կազմում է 70% և ավել
//	Ցանկացած գույք, որը գտնվում է տարերային աղետի գոտում: Այս կամ այն տարածաշրջանը համարվում է տարերային, երբ առկա է համապատասխան իրավասու մարմինների կողմից այդ մասին հաստատում
//	Ցանկացած գույք, որը պետական մարմինների կարգադրությամբ ենթակա է առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրանց վրա արգելք դնելու, վնասման կամ ոչնչացման
//	Փայտից կառուցված ցանկացած գույք
//	ՀՀ դրամով կամ արտարժույթով ցանկացած կանխիկ փող
//	Բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր
//	Ձեռագրեր, պլաններ, գծագրեր և այլ փաստաթղթեր, հաշվապահական և գործնական փաստաթղթեր,
//	Մոդելներ, մակետներ, նմուշներ, ձևաթղթեր և այլն
//	Թանկարժեք մետաղներ ձուլակտորներով և թանկարժեք քարեր առանց շրջանակների
//	Համակարգիչներում և այլ համակարգերում տեղեկություններ կրող և պահպանող սարքեր/սարքավորումներ, մասնավորապես՝ տեսաժապավեններ, ձայնային ժապավեններ, սկավառակներ, հիշողության կրիչներ և այլն
//	Դրոշմանիշեր, դրամներ, դրամների հավաքածուներ, նկարներ, գեղանկարներ, քանդակներ կամ այլ հավաքածուներ կամ արվեստի գործեր
//	Դյուրավառ և պայթուցիկ նյութեր
//	Տրանսպորտային միջոցներ
//	Ապահովագրության տարածքում գտնվող, սակայն Ապահովադրին (Շահառուին) չպատկանող գույք
//	Ընտանի, գյուղատնտեսական և այլ կենդանիներ
//	Ծառեր, նաև՝ բերքատու, գյուղատնտեսական բերք և այլն
//	Սնունդ, սննդամթերք, ոգելից խմիչք, ծխախոտ և այլ նմանատիպ ապրանքներ
//	Հնակառույց և/կամ վթարային վիճակում գտնվող շինություններ, շենքեր և կառույցներ
//	Քաղաքացիական շրջանառությունից հանված գույք
//	Բացօթյա տարածքում տեղակայված շարժական գույք՝ բացառությամբ այն գույքի, սարքերի, սարքավորումների և համակարգերի, որոնք նախատեսված են շինությունից դուրս (բացօթյա տարածքում) օգտագործելու/շահագործելու համար

Վերոնշյալ սահմանաչափերը, ինչպես նաև ցանկացած այլ պայմանի շեղման դեպքում անհրաժեշտ է դիմել Ապահովագրողին՝ հատուկ հաստատման և պայմանների տրամադրման համար:

Գույքի տեսակ	Տարեկան սակագին
Անշարժ գույք	0.16 %, նվազագույնը 1,000 դրամ
Երկրաշարժից ապահովագրություն	0.4%, նվազագույնը 1,000 դրամ

Վերոնշյալ սահմանաչափերի, ինչպես նաև ցանկացած այլ պայմանի շեղման դեպքում անհրաժեշտ է դիմել Ապահովագրողին (լրացնելով համապատասխան հարցաթերթիկ)՝ հատուկ հաստատման և պայմանների տրամադրման համար:

Ապահովագրողը պարտավոր է 5 աշխատանքային ժամի ընթացքում պատասխանել հարցմանը՝ հետևյալ 3 տարբերակներից մեկով.

1. Հաստատել գործարքը,
2. Մերժել գործարքը՝ ներկայացնելով մերժման հիմնավորում,
3. Առաջարկել այլ պայմաններ՝ ներկայացնելով հիմնավորում

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրված անձ

Ապահովագրված անձ կարող են հանդիսանալ 16-75 (ներառյալ) տարեկան ֆիզիկական անձինք:

Ապահովագրված անձ չեն կարող լինել անձինք, ովքեր.

- Պայմանագրի կնքման պահին տառապում են նյարդային կամ հոգեկան համակարգի ծանր ախտահարմամբ (թուլամտություն, էպիլեպսիա, նյարդային համակարգի այլ խանգարումներ),
- ի ծնե ունեն անկանոնություններ (անոմալիաներ),
- հանդիսանում են հաշմանդամ կամ ունեն հաշմանդամ երեխայի կարգավիճակ,
- ՄԻԱՎ վարակակիր են կամ հիվանդ են ՁԻԱՀ-ով,
- առողջական վիճակից ելնելով՝ մշտական խնամքի կամ հսկողության կարիք ունեն:

Ապահովագրական ռիսկեր

- Մահ դժբախտ պատահարի հետևանքով,
- Մշտական անաշխատունակություն դժբախտ պատահարի հետևանքով,

Ապահովագրության տարածք

Ապահովագրությամբ հատուցվում են ՀՀ, ԼՂՀ տարածքում տեղի ունեցած պատահարները:

Բացառությունները և այլ պայմանները

Ապահովագրական ծածկույթից բացառությունները, չհատուցվող դեպքերը կարգավորվում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված և այդ պահին գործող Դժբախտ պատահարներից ապահովագրության կանոններով, որը հասանելի է ընկերության պաշտոնական կայքէջում:

Չհատուցվող գումար

Չհատուցվող գումար չի կիրառվում

Գործող ապահովագրական գումարի սահմանափակումներ, սակագներ

Ապահովագրական գումար	Տարեկան սակագին
Մինչև 40 մլն. ՀՀ դրամ	0.16%, նվազագույնը 1,000 դրամ

Վերոնշյալ սահմանաչափերի, Ապահովագրված անձի տարիքի գերազանցման, ինչպես նաև ցանկացած այլ պայմանի շեղման դեպքում անհրաժեշտ է դիմել Ապահովագրողին (լրացնելով

համապատասխան հարցաթերթիկ և տրամադրելով Ապահովագրված անձի անձնագրի պատճենը)՝ հատուկ հաստատման և պայմանների տրամադրման համար:

Ապահովագրողը պարտավոր է 5 աշխատանքային ժամի ընթացքում պատասխանել հարցմանը՝ հետևյալ 3 տարբերակներից մեկով.

4. Հաստատել գործարքը,
5. Մերժել գործարքը՝ ներկայացնելով մերժման հիմնավորում,
6. Առաջարկել այլ պայմաններ՝ ներկայացնելով հիմնավորում:

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրված անձ և շահառու

Ապահովագրված անձ կարող են լինել ցանկացած գործունակ ֆիզիկական անձինք, ովքեր հանդիսանում են Վարկառու: Պայմանագրով շահառու են հանդիսանում Վարկատու հանդիսացող առևտրային բանկերը

Ապահովագրական գումար

Ապահովագրական գումարը սահմանվում է Չվճարված կանխավճարի գումարի մնացորդային արժեքի չափով:

Ապահովագրական գումարի առավելագույն չափը՝

Երկրորդային շուկա	Շուկայական արժեքի 30% - 10 և ավելի % կանխավճար
Առաջնային շուկա	Շուկայական արժեքի 20% - 7.5 և ավելի % կանխավճար

Ապահովագրական փաթեթներ

- Փաթեթ «Ազգային Հիփոթեքային» - Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով վերաֆինանսավորվող վարկերը
- Փաթեթ «Բնակարան Երիտասարդներին» - Բնակարան Երիտասարդներին վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության միջոցով «Երիտասարդ» ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրով ֆինանսավորվող վարկեր:

Բացառությունները և այլ պայմանները

Ապահովագրական ծածկույթից բացառությունները, չհատուցվող դեպքերը կարգավորվում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված և այդ պահին գործող Հիփոթեքային վարկի կանխավճարի ապահովագրության կանոններով, որը հասանելի է ընկերության պաշտոնական կայքէջում:

Ապահովագրավճար

Ապահովագրավճարը հաշվարկվում է՝ Ապահովագրական գումարի (Չվճարված կանխավճարի գումարի մնացորդի) վրա կիրառելով 2 % սակագին, նվազագույնը 1,000 դրամ:

ՍԱԿԱԳՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Ապահովագրության դաս	Մեկ պայմանագրի գծով առավելագույն ապ.գումար	Սակագին
Տրանսպորտային միջոցների ապահովագրություն	Առավելագույն սահմանաչափ կիրառելի չէ: Ցանկացած ապահովագրական գումարի դեպքում անհրաժեշտ է դիմել Ապահովագրողի հաստատման համար	2.50 %
Գույքի ապահովագրություն	100,000,000 ՀՀ դրամ	0.16 %
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	40,000,000 ՀՀ դրամ	0.16 %
Կանխավճարի ապահովագրություն	Ըստ նկարագրի	2 %